



# Հ.Օ.Մ. "ՌՈՒԲԻՆԱ" ՄԱՍՆԱԾԻՒՂ ARS TORONTO ROUBINA CHAPTER

## Լրատու Newsletter

12/ 2022

ՀՕՄ-ի «Ռուբինա» Մասնաճիւղի Վարչութիւնը  
կը շնորհաւորէ ձեր

**Նոր Տարին**  
և  
**Սուրբ Ծնունդը**

ARS Toronto Roubina Chapter Executive Committee  
wishes you a

MERRY  
**CHRISTMAS**

&  
HAPPY NEW YEAR 2023



### Բովանդակութիւն / Contents

- Մասնաճիւղի Լուրեր և Տեղեկութիւններ
- Յառաջիկայ Ձեռնարկներ
- Նախկին Ձեռնարկներ
- Զանազան
- News from Toronto Roubina Chapter
- Upcoming Events
- Previous Events
- Miscellaneous

# Մասնաճիւղի Լուրեր Եւ Տեղեկութիւններ News from Toronto Roubina Chapter

## Շրջ.Վրչ. կազմակերպած Միջ-վարչական առցանց հանդիպում

Ուրբաթ՝ 14 Հոկտեմբեր, 2022-ին, երեկոյեան ժամը 8-ին, վարչութիւնս մասնակցեցաւ Շրջ.Վրչ. կազմակերպած Միջ-վարչական առցանց հանդիպումին: Տեղի ունեցան հետեւեալ ներակայացումները՝

1) Ժողովավարական կանոններ, քուէարկութիւն եւ ընտրութիւն, դասախօս՝ Ընկհ.Նայիրի տերտերեան:

2) Ժողովավարական կանոններու գործնական կիրարկումը մեր գաղութային եւ միութենական կեանքէն ներս, դասախօս՝ Ընկհ. Հուրի Նաճարեան:

3) Ընդհանուր կանոններ, դասախօս՝ Ընկհ. Աննա Պուլկարեան:

Վարչութիւնս օգտաշատ եւ բարձր գնահատեց դասախօսութիւնը եւ կ'առաջարկէ կրկնութիւնը նմանօրինակ ձեռնարկներու:

## Meeting with ARS Canada Executive Committee

On Friday October 14, 2022, at 8:00 p.m., the Executive Committee participated in a zoom meeting with ARS Canada Executive Committee during which time the following topics were presented:


- 1) "Meeting Rules, Voting and Election" Presenter: Ungh. Nyree Derderian
- 2) "The Practical Implementation of Meeting Rules within Our Community and Organization" Presenter: Ungh. Houri Najarian
- 3) "General Rules" Presenter: Ungh. Anna Boulgarian



Ungh. Nyree Derderian



Ungh. Houri Najarian



Ungh. Anna Boulgarian

## Ջոհուած Հերոսներու Ձաւակներ

**Թէ կան լացող, տխուր աչքեր,  
Թող ծիծաղեն այս գիշեր:  
Ու նոր Տարին նոր խնդութեամբ  
Թող ներս մտնէ այս գիշեր:**

Ամանորեան ցուրտ օրերը ջերմացնենք ժպիտ մը ընծայելով Արցախեան 44 օրեայ պատերազմին զոհուած ազատամարտիկներու երեխաներու դէմքին, որոնք պիտի ըլլան մեր ապագայ հերոսները:

Ջոհաբերեցին իրենց թանկագինը՝ պաշտպանելու հայրենիքին սահմանները, իրենց ետին թողելով անպատսպար երեխաներ:

Մեզմէ իւրաքանչիւրը պարտքի ու յարգանքի խոր զգացում ունի անոնց նկատմամբ:

Սատար կանգնինք անոնց մեր նուազագոյնը տալով՝ հովանաւորելով, իրականացնելով անոնց երազը:

Նոր Տարուայ և Ս.Ծննդեան Տօնական օրերուն նուիրելու հաճոյքը ապրելով եկեք կողք-կողքի \$450 Գանատական կամ \$330 Ամն. նուիրելով հովանաւորենք երեխայ մը:

Յաւելեալ տեղեկութիւններու համար կարելի է դիմել:

- Քեպէք- Ընկ. ԱննաՊուլկարեանի (514) 592-4976
- Օնդարիօ- Ընկ. Սեդա Թաշճեանի (416) 878-9518
- arscanada@gmail.com



 **Չոհուած Հերոսներու Ձաւակներ**  
**Children of Fallen Heroes**

Հովանաւորէ զոհուած զինուորի զաւակ մը  
եւ բարելաւէ իր կեանքը

Sponsor a child of a fallen Hero  
and make an impact

To sponsor a child please contact:

Seda Tachdjian  
Սեդա Թաշճեան / Ontario 416-878-9518

Anna Boulgarian  
Աննա Պուլկարեան / Quebec 514-592-4976

For Donations please visit [ARS-Canada.ca](http://ARS-Canada.ca)  
For e transfers  
[ars-canada@bellnet.ca](mailto:ars-canada@bellnet.ca)

\$450 CAD/year  
(\$330 USD)

Armenian Relief Society of Canada

## Social Services

**Հ.Օ.Մ.-ի Ընկերային Ծառայութեան գրասենեակը բաց է  
Երկուշաբթիէն Ուրբաթ ժամը 10:00 – 4:00**

Our Social Services Office is open Monday-Friday 10:00 – 4:00

**Հեռ: 416-495-0644**

**arssocialservices@gmail.com**



### Ծերանոցի Այցելութիւն

Ընկերային ծառայութեան յանձնախումբը ուրախ է յայտարարելու թէ՛ պիտի վերսկսի իր համագործակցութիւնը տարեցներու տան հետ (Fieldstone Commons, Bayview Extencicare and Seniors Health Center) : Առաջին հերթին նոր տարուայ այցելութիւններ և ամիսը անգամ մը ճաշ պատրաստել:

Համաճարակի նախազգուշացումները տակաւին գոյութիւն ունի ծերանոցներէն ներս, ուստի այս տարի եւս արտօնութիւն չ'ունինք ծերանոց այցելելու եւ յարմար նկատեցինք մեր սիրելի տարեցներուն նոր Տարուայ նուէրները ուղարկել (փափուկ գուլպայ և տաքուկ ծածկոցներ):

Այս տարի կրկին՝ ՀՕՄ-ի Ամենօրեայ վարժարանի 4-րդ դասարանի աշակերտները, նոր Տարուայ եւ Սուրբ Ծննդեան առթիւ, իրենց սրտագին բարեմաղթութիւնները պիտի զետեղեն նուէրներուն վրայ, որ մեծ ուրախութիւն կը պատճառէ մեր տարեցներուն, անոնց ընտանիքներուն և մեր ուսանողներուն:

Որովհետեւ մենք անձամբ ներկայ գտնուելու յարմարութիւնը չունինք, սակայն նոյնիսկ հեռուէն կարող ենք մեր տարեցներուն դէմքին ժպիտ արձանագրել Ամանորուայ և Ս. Ծննդեան առթիւ:



## Visit to Seniors Homes

The Social Services Office committee is delighted to commence its partnership with the seniors homes (Fieldstone Commons, Bayview Extendicare and Seniors Health Center) by starting visits and preparing monthly lunches in the New Year.

Due to the ongoing pandemic, we are not allowed to visit the nursing homes in person. However, we will be sending warm socks and blankets as gifts.

This year as other years, we will attach the gifts with handwritten Christmas cards written by the fourth graders of the A.R.S. Day School. This collaboration started last year and it brought so much joy to our seniors, their families, and our students.

We can't be there in person, but we can still bring Christmas joy even from far.



# Յառաջիկայ Ձեռնարկներ / Upcoming Events

**24 Փետ. 2023 Փոքրիկներու Բարեկենդան**

**26 Փետ. 2023 ՀՕՄ-ի Հոգեհանգիստ**

**5 Մարտ 2023 Կանանց Միջազգային Օր**

**30 Ապրիլ 2023 Ռուբինա Մասնաճիւղի 60րդ Ամեակի  
տօնակատարութիւն**

**13 Մայիս 2023 Մայրերու Օր եւ Համբարձում**

**10 Յունիս 2023 Քայլարշաւ**

February 24, 2023 ARS Carnival / Paregentan

February 26, 2023 ARS Memorial Service

March 5, 2023 International Women's Day

April 30, 2023 Roubina Chapter's 60th Anniversary

May 13, 2023 Mother's Day & Hampartsum

June 10, 2023 Walkathon

# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Ապագայ Ղեկավար Անդամ Պատրաստելու Ծրագիր

Շաբաթ, 19 Նոյեմբերին, Հայ երիտասարդական կեդրոնէն ներս, ջերմ եւ հարազատ մթնոլորտի մը մէջ տեղի ունեցաւ ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի կազմակերպած՝ ղեկավարներու պատրաստութեան ծրագրի (Leadership Development Program) հանդիսութիւնը:

Մանրամասնութեան համար կարդալ [Թորոնթո Հայի հատուածը](#):



# Նախկին Ձեռնարկներ

## Previous Events

### Leadership Development Program

Leadership development programs are offered by several big organizations, and leading Canadian universities, but what they lack in these program offerings is the unique cultural lens, as they're offered to a diverse group of leaders.

Eight months ago a group of ARS members came together to imagine what leadership development for women in the ARS community can look like while thinking about it from a cultural lens.

What does it mean to be an Armenian in the community, and the workplace; and how does our Armenian culture have an impact on the decisions we make and the path we take?

This has been six months of volunteer work in the background as the team brainstormed, designed and developed this new leadership program.

The group brainstormed the overall objectives of creating a women leadership program:

- 1) Improve their leadership abilities in the Armenian community and out in the workforce / wider community.
- 2) Find ARS as a place where they feel a sense of belonging; and
- 3) Build personal relationships and have fun

Over the course of the fall months, the committee executed on the 3-day program. We piloted this new program with 14 women. During day 1, on September 24, 2022, we talked about all things related to leading the self: values, passions, strengths and purpose. We need to do self reflection on who we are as a leader, otherwise it's challenging to think about how to lead others in the workplace and the community.

During day 2, on October 22, 2022, we took it one step further: we talked about the importance of goal setting, resilience and mental health, and diversity inclusion and belonging. What does it mean to belong?

During our last day of the program, on November 19, 2022, we brought it all together to focus on the personal brand we have in the context of leadership. We talked about the support that we need as leaders, whether that's from a coach, mentor and sponsor. All three play a critical role in helping us grow as leaders. And last, we discussed the various types of leadership styles.

At the end of day 3, We held a graduation ceremony where our 14 graduates received their Certificates of Completion. The cake cutting took place afterwards where participants shared their appreciation of the program and how they will apply what they learned in their personal and professional lives. Our invited guests, also ARS Toronto Roubina chapter members, shared their experiences being a member and what being an ARS member means to them.

ARS Toronto Roubina Chapter would like to Thank the six organizing committee members and facilitators of this program: Jackline Ajamian, Catherine Dorna, Ani Hotoyan-Joly, Dr. Garni Tatikian, Reena Khesroof and Hasmig Zarokian. Thank you for your commitment and dedication to ARS and leadership development.



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Տարեկան Տօնավաճառ

Հ.Օ.Մ.-ի “Ռուբինա” Մասնաճիւղի 2022-2023 տարուան տօնավաճառը տեղի ունեցաւ Շաբաթ՝ Նոյեմբեր 5, եւ Կիրակի՝ Նոյեմբեր 6, 2022-ին: Բացման արարողութեան ներկայ էին կղերականներ, Հայ կեդրոնի պատկան մարմիններու ներկայացուցիչներ, Հ.Օ.Մ.-ի ընկերուհիներ եւ համակիրներ: Խօսք առին տօնավաճառի յանձնախումբի ատենապետուհի Ընկի. Լենա Օհաննէսեան, Վարդան Ծ. Վարդապետ Թաշճեան, ՀՅԴ Սողոմոն Թեհլիրեան կոմիտէի ներկայացուցիչ, Ընկի. Նայիրի Շարապխանեան: Տէր Տաթևի Քահանայ Միքայէլեան եւ Պատուելի Աւետիս Պոյներեան աղօթքով օրհնեցին տօնավաճառի հանդիսութիւնը:

Ապա խօսք առաւ Մասնաճիւղիս Ատենապետուհի Ընկի. Մարալ Միսիրեան եւ շնորհաւորեց Տօնավաճառի եւ կամաւորներու ընկերուհիները իրենց անսակարկ աշխատանքին համար: Ընկի. Մարալ տեղեկացուց ներկաներուն թէ այս տարուան տօնավաճառը կը զուգադիպի Հ.Օ.Մ.-ի “Ռուբինա” Մասնաճիւղի հիմնադրութեան 60 ամեակին: Այս առիթով “Ռուբինա” Մասնաճիւղը \$60,000-ի յատկացում պիտի կատարէ Հ.Օ.Մ.-ի ամենօրեայ վարժարանին:

Ներկայացնելէ ետք օրուան Կնքամայրի հակիրճ կենսագրականը, Ընկհ. Մարալ հրաւիրեց Ընկի. Մարինէթ Հոթոյեանը որպէսզի հատէ ժապաւէնը: Ներկաները ճաշակեցին բժախնդրութեամբ պատրաստուած Հայկական ճաշերը եւ անուշեղէնները եւ կրցան կատարել իրենց Կաղանդի նուէրներու գնումները: Կիրակի օր յայտարարուեցաւ վիճակահանութեան շահող թիւերը:

Վարձքը կատար Հ.Օ.Մ.-ի ընկերուհիներուն: Շնորհակալութիւն բոլոր Հ.Օ.Մ.-ի հովանաւորներուն եւ նուիրատուներուն:



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Annual Christmas Market

ARS Toronto Roubina Chapter's annual Christmas Market 2022-2023 took place on November 5 & 6th.

Various clergymen, representatives from sister and community organizations, ARS members and supporters were present during the opening ceremony. ARS Christmas Market committee chair, Ungh. Lena Ohanessian, Very Rev. Fr. Vartan Tashjian, Ungh. Nayiri Sharabkhanian (representative from ARF Soghomon Tehlirian) shared their message with the audience. Archpriest Rev. Fr. Datev Mikaelian and Pastor Avedis Boynerian blessed the event.

Ungh. Maral Misirian, chair of ARS Toronto Roubina Chapter Executive thanked all the members of the Annual Market committee and volunteers for their unconditional support. Ungh. Maral informed the attendees that this year the Market coincides with the establishment of our Chapter's 60th anniversary in 2023. Thus, Roubina Chapter will be donating \$60,000 to the ARS Day School.

Ungh. Maral introduced Ungh. Marinette Hotoyan as this year's honoree with a description of her valuable contribution to our chapter followed by the ribbon cutting ceremony.

Attendees enjoyed all the meticulously prepared delicious Armenian foods and sweets; did their Christmas shopping from our vendors. On Sunday, the winners of the lottery tickets were announced.

We are grateful to all of our ungerouheez and thankful for our donors and supporters.



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Երեցներու Ճաշի Հիւրընկալութիւն

Հ. Օ.Մ.-ի "Ռուբինա" Մասնաճիւղի տօնավաճառի յանձնախումբը Երեքշաբթի՝ 15 Նոյեմբեր, 2022-ին յատուկ հրաւերով հիւրընկալեց Թորոնթոյի Հայ Երեցներու Ընկերակցութեան անդամները: Ներկայ էին աւելի քան 40 անդամները:

Օրուայ ճաշն էր մածունով ապուր, միսով եւ կարագով լեցուած կոլոլակներ, Քեսապի պանիր հաց, անուշեղէն եւ սուրճ:

Ուրախալի առիթ մըն էր յանձնախումբիս համար վայելել մեր երեցներու ներկայութիւնը որոնցմէ շատեր մեծ դերակատարութիւն եւ ներդրում ունեցած են մեր կեդրոնի հիմնաւորման եւ ուրճացման գործընթացին: Իսկ ներկայիս իրենց ջահը փոխանձած են իրենց գաւակներուն, մինչ իրենց թոռները կը յաճախեն Հ.Օ. Մ.-ի ամենօրեայ վարժարանը:

Սակայն այսօր նոյնքան տխուր օր մըն էր մեր երեցներուն համար: Անոնք առհաւետ հրաժեշտ տուած էին իրենց բազմամեայ Ատենապետ՝ Պրն. Սերոբ Վեսօեանին: Առ ի քաջալերանք մեր երեցներուն՝ Ընկի. Արփի Վեսօեան ներկայ գտնուեցաւ այս ճաշին:

Ընկեր Յակոբ Ճանապագեան իր հոգեշունչ խօսքը ուղղեց երեցներուն եւ իրենց անունով ցաւակցութիւն յայտնեց Ընկի. Վեսօեանին: Ապա շնորհակալութիւն յայտնեց յանձնախումբիս այս հիւրասիրութեան համար, եւ առ ի երախտագիտութիւն՝ երեցներու կողմէ \$200 նուիրեց տօնավաճառի յանձնախումբին:

Յանձնախումբս յոյսով է որ ապագային նման ձեռնակներով կ'ուրախացնենք մեր երեցները:





# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Luncheon with the Senior's Group

ARS Toronto Roubina Chapter's Annual Christmas Market committee organized and invited our Toronto Seniors group members to a luncheon on November 15, 2022. Forty seniors attended the event.

They served Madzounov Kofteh, Kesabi cheese bread, sweets and coffee.

It was a joyous occasion to spend time in the presences of our seniors who have played a major role in the establishment of our community. And now their torch is being carried by their children and their grandchildren who attend the ARS Day School.

The day was also a sad day for our participants because they had said a final farewell to Ung. Serop Vesoyan who was the chair of their committee for many many years. In support of the seniors, Ungh. Arpi Vesoyan attended the luncheon.

Ung. Hagop Janbazian shared his heartfelt words and condolences to Ungh. Arpi. He thanked the committee and as a sign of appreciation and gratitude, donated \$200 to the Christmas Market committee on behalf of the Senior's group.

The committee is hopeful that they will continue to provide similar luncheons for our seniors.



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Տոհմիկ Օր Ձօնուած Սուրիոյ Հայ Գաղութին Նոյեմբեր 26-27, 2022

Թորոնթոնայ գաղութի ազգապահպանման կարելոր հիմնաքարերէն մէկը համարուող ՀՕՄ-ի «Ռուբինա» մանածիւղի կազմակերպած «Տոհմիկ Օր»-ուան 28-րդը՝ «Հիւրընկալ Սուրիան, Հայաշունչ Հալէպը» տեղի ունեցաւ երկու օրերու տեւողութեամբ, 26-27 նոյեմբեր 2022-ին: Առաջին օրը՝ խրախճանքին, լիառատ սեղաններու շուրջ համխմբուած, «Կիլիկիա» նուագախումբի եւ մեներգողներ՝ Լեւոն, Դալար, Գէորգ եւ Մհերի երգերով եւ հաճելի անակնկալներով յագեցած երեկոյթին ընթմէջէն մտովի ուղղուեցանք ծննդավայր՝ Սուրիա: Մուտքի սեղանը կը զարդարէր՝ ամիսներու երկարատեւ աշխատանքներու արդիւնքը եղող եւ այդ երեկոյթին կրկնակի փայլք տուող «Տոհմիկ Օր»-ուան առիթով յատուկ խնամքով հրատարակուած գիրքերը, որոնք նուրիբուեցան ներկաներուն: Աշխարհահռչակ գեղանկարիչ Գէորգ Մուրատին բացառիկ գործերով, Սուրիական արտադրութիւններով զարդարուած ցուցադրական սեղաններով, պատերուն պաստառներով, գեղեցիկ համադրութեամբ զարդարուած սեղաններով ու Հալէպի Հին շուկաներու մեծածաւալ նկարներով՝ Հայ Կեդրոնի սրահին իւրաքանչիւր անկիւնէն կը բուրէր Սուրիոյ յուշերու քաղցրութիւնը:

Հանդիսավարներ՝ Սարին Փօլատեան-Աբիկեան եւ Անդօ Խշուաճեան «Բարի գալուստ» մաղթեցին ներկաներուն: Բացման Խօսքով հանդէս եկաւ «Տոհմիկ Օր»-ուան փոխ ատենապետուհի՝ Վարդուհի Պարտագճեան, ապա՝ «ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄ» խորագիրով կենդանի պատկերին ընթմէջէն Սուրիոյ հայ գաղութին անցեալէն այսօր երկարող յաղթական ճանապարհը կենդանացաւ: Ռուպինա Սարգիսեանի հայկական պարի կատարողութենէն ետք, Սարին Փօլատեան-Աբիկեան ասմունքեց Զարմիկ Պօղիկեանի՝ «Հեքիաթային Իմ Հալէպ»ը, որմէ ետք Լեւոն Գարակիւլէան կատարեց Սայաթ Նովա:

Ականաւոր անձնաւորութիւնները ներկայացուց ընկերուհի՝ Հուրի Նաճարեան ու պարգեւատրուեցան՝ տիկ. Սոնա Օհաննէսեան, տիար Գրիգոր Հոթոյեան եւ Գերշ. Տէր Սուրէն Արք. Գաթարոյեան:

Սրտի խօսք եւ Սեղանի օրհնութիւն կատարեց՝ Գերշ. Տէր Բաբգէն Արք. Չարեան, Առաջնորդ Գանատայի Հայոց Թեմի, որմէ ետք տեսերիզի ցուցադրութիւն՝ «Հայերը Սուրիոյ Մէջ»-ը կենդանացուց Սուրիոյ պատկերները մեր աչքին առաջ եւ խրախճանքը շարունակուեցաւ երգ ու պարով, վիճակահանութեամբ եւ ճոխ մթնոլորտով, ուր բոլոր ներկաները ուրախ տրամադրութեամբ վայելեցին «Տոհմիկ Օր»-ուան յանձնախումբին, ամիսներ շարունակ երկարող, մեղուջան աշխատանքի արգասիքը:



# Նախկին Ձեռնարկներ

## Previous Events

Երկրորդ օրը, Կիրակի, 27 նոյեմբեր 2022-ին, «Տոհմիկ օր»-ուան դասախօսական ցերեկոյթը անցկացնելու նպատակով թորոնթոհայերը համախմբուած էին Հայ Կեդրոնի հայաբոյր սրահէն ներս, ուր ներկաները ցուցադրուած պատկերներուն, իրերուն եւ զարդերուն կողքին ըմբռնչանցին արուեստագէտ Գէորգ Մուրատի արուեստի անգին նմոյշներէն մի քանին:

Օրուան հանդիսավարն էր՝ Տիրուկ Մարգարեան-Կարապետեան, ան ասմունքեց Համաստեղի՝ «Հայու Ոգին», որմէ ետք բացման խօսքով հանդէս եկաւ «Տոհմիկ Օր»-ուան յանձնախումբի ատենապետ՝ Կարո Միսիրեան:

Դասախօս՝ Դոկտ. Վիգէն Թիւֆէնքճեան ներկայացուց «Հալէպ Հնոց Հայապահպանման» նիւթը, որմէ անմիջապէս ետք, Կոմիտասի «Վաղարշապատի Պար» եւ Արամ Խաչատուրեանի «Վալս»ը կատարեցին Նշան Փափազեան՝ Զութակով եւ Դաշնամուրով՝ Մարիա Տաւուտեան:

ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղի ատենապետ՝ Մարալ Միսիրեան ընթերցեց Օնթարիոյ նահանգի խորհրդարանի անդամ, Տիար Արիս Պապիկեանի գնահատական խօսքը: Դասախօսութեան երկրորդ նիւթը՝ «Սուրիոյ Հայ Գաղութի Իրայատկութիւնը», դասախօսեց Մոնթրէալէն ժամանած Լորիկ Սապունճեան-Ճատուրեան, ապա՝ Հրայր Թաշճեանի համադրած տեսերիզի ցուցադրութենէն՝ «Պատկերներ Սուրիահայ Կեանքէն» ետքը ԱՄՆ-էն ժամանած աշխարհահռչակ արուեստագէտ՝ Գէորգ Մուրատ ներկայացուց «Արուեստը Մշակոյթի Պահպանման Միջոց» նիւթը, ուր նկարչական կենդանի կատարումով, Յովհաննէս Մուպալէտի նուագակցութեամբ, եւ իր արուեստի իրայատուկ ոճով հիացուց բոլոր ներկաները: Հասած էր դասախօսները պարգեւատրելու պահը, որմէ ետք փակման խօսքը կատարեց՝ Արժ. Տէր Տաթև Աւագ Քահանայ Միքայէլեան, ապա՝ «Կիլիկիա» երգը միաբերան երգեցին բոլոր ներկաները, ու հիւրասիրութեամբ մը ասարտին հասաւ ՀՕՄ-ի «Ռուբինա» մասնաճիւղին կազմակերպած 28-րդ «Տոհմիկ Օր»ը:

Դիտել ձեռնարկը դիմատետրի վրայ  
Watch Dohmig Or Facebook Event [Here](#)



# Նախկին Ձեռնարկներ Previous Events

## Մարզանքի դասընթացք / Fitness classes

Հ.Օ.Մ-ի «Ռուբինա» մասնաճիղի վարչություն կազմակերպած մարզանքի դասընթացքը սկիզբ առավ Չորեքշաբթի, 12 Հոկ. 2022-ին Եւ աւարտին կը հասնի 21 Դեկտ. 2022-ին : Ունեցանք 16 մասնակիցներ, մարզիչ ունենալով՝ Թամար Մակարեանը:



ARS Toronto Roubina Chapter fitness classes started on Wednesday October 12, 2022 and will be ending on December 21st. We had 16 eager participants led by their instructor Tamar Magarian.





# Զանազան Miscellaneous

## Juliet Janbazian awarded the Queen's Platinum Jubilee Medal for her years of service to the community



Juliet Janbazian was awarded the Queen Elizabeth II Platinum Jubilee Medal for her years of dedicated service to the Armenian community of Toronto. Han Dong, Member of Parliament (MP) for Don Valley North presented the medal to Janbazian in an intimate ceremony on Nov. 25.

“For the past 40 years, Juliet has been a dedicated volunteer working to make our community a better place,” said former city councillor for Ward 33 and member of the medal selection panel Jonathan Tsao. “Because of her selfless dedication to others, she has made a profound impact on the lives of countless individuals in our community and is a true role model for the next generation. Juliet exemplifies the dedication to service and community that this award stands for,” Tsao added.

Janbazian, who was born in Istanbul and grew up in Toronto, has been a longtime volunteer in several organizations and institutions within the Armenian community of Toronto. Most notably, she has served on the Board of Directors of the ARS Armenian Private School and the ARS Summer Camp for the past four decades. She is a longtime member of the Armenian Relief Society (ARS) Roubina chapter, the Hamazkayin Klatsor chapter, and the St. Mary Armenian Apostolic Church of Toronto.

The Queen Elizabeth II Platinum Jubilee Medal is a commemorative medal created to mark the seventieth anniversary of Queen Elizabeth II's accession to the thrones of the United Kingdom and other Commonwealth realms, including Canada, in 2022.